ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «09» հունիսի 2023 թ N 1000-Ա

«ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբերի 2023 թվականի հունիսի 8-ին կայացած աշխատանքային հանդիպման արձանագրությունը.

հրամայում եմ.

1. «ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 056/T-085) N 1/Y1-B հավելվածով ամրագրված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական

գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

2. «ՏԵՍՏԱՎՅԱԶ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման մարմին նշանակել մինչև հավատարմագրման տեխնիկական կոմիտեի կողմից հետագա հավատարմագրման կամ հավատարմագրման մերժման մասին համապատասխան որոշման ընդունումը, տրամադրել նշանակման վկայական՝ Ն-34 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-34 (Н-34) 2023:

3. «ՏԵՍՏԱՎՅԱԶ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային գրանցել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել՝ «ՏԵՍՏԱՎՅԱԶ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային նշանակման ողջ ժամանակահատվածում ապահովել գործող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Հավելված
ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2023 թ.
դեկտեմբերի 9-ի N 1000-Ա հրամանի

ՑԱՆԿ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 018/2011),
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված «Հրդեհային անվտանգության և հրդեհի մարման ապահովման միջոցների պահանջների մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 043/2017):